


ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը (կազմող և ընդհանուր խմբագիր՝ Վարդան Ազատյան), *Երևան, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտ, 2016, 760 էջ:*

Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտը «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկության աջակցությամբ «Ներքին գրոց» մատենաշարի շրջանակում



լույս է ընծայել 1913 թ. Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարանում պաշտպանության ներկայացրած մեծանուն պատմաբան Աշ. Հովհաննիսյանի ավարտաճառը: Նրա նախամուտը՝ գիտության անդաստան ազդահայտող այս գործը ներկայացվող հրատարակությամբ վերաճել է ստվարածալ գիտական մի աշխատասիրության: Գիրքը բաղադիր կառուցվածք ունի, ինչը տվյալ դեպքում կանխորոշում է այն ներկայացնելու կերպը. այդուհանդերձ, կփորձենք հակիրճ լինել: Գրքի ատաղձը ավարտաճառի գերմաներեն բնագիրն է՝ համադիր հայերեն թարգմանությամբ, և հաջորդող հավելվածը, որտեղ

ներկայացված է առավելապես Օրիի նամականին կամ, թերևս, ավելի ճիշտ է ասել, դրա՝ Աշ. Հովհաննիսյանին հասանելի դարձած մասը (թվով 16 արխիվային միավոր) և ճիզվիտ Յու. Թ. Կրուշինսկիի՝ Օրիի մասին հաղորդումը: Հավելվածին հաջորդիվ՝ «Վավերագրեր» խորագրով ներկայացված են 4 ելույթ-գրություն, որոնցից 3-ը Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիան համալսարանի արխիվում պահվող փաստագրեր են՝ վերը նշված համալսարանի Փիլիսոփայության ֆակուլտետի այն ժամանակվա դեկան Ֆրանց Մունքերի դիմումը՝ ուղղված Աշ. Հովհաննիսյանի պրոֆեսորներին՝ երիտասարդ գիտնականի ավարտաճառի պաշտպանությունն արտոնող նրանց եզրակացությունները ստանալու խնդրանքով: Ապա՝ պահանջված եզրակացությունները՝ տրված պատմաբաններ Կարլ Թեոդոր ֆոն Հայգելի (Աշ. Հովհաննիսյանի գիտական դեկավարը) և Հերման Հայնրիխ Գրաուերթի կողմից: Վերջին չորրորդը՝ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում 1955 թ. պաշտպանած դոկտորական ատենախոսության առիթով Աշ. Հովհաննիսյանի պատրաստած խոսքն է, որ հրատարակված է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող նրա աշխատանքային օրինակի հի-

ման վրա: Կիրառված համադիր թարգմանության սկզբունքը «Վավերագրեր» բաժնում խախտված է, և գերմանացի պրոֆեսորների կարծիքները տրված են միայն հայերեն թարգմանությամբ՝ զանց առնելով դրանց գերմաներեն բնագրերի հրատարակությունը: Այսպիսով, այս գրքի կայացման հիմնադրերը թարգմանական-վերծանականն է, որն իրագործվել է թարգմանիչ-մասնագետների մի ամբողջ խմբի կողմից: Անշուշտ, հեռու ենք չափուկչիռ անելու մտադրությունից, բայց չենք կարող լռության տալ, որ այս գործում մյուս լեզուների վերաբերությամբ անհամամասն մեծ է գերմաներենից թարգմանության ծավալը, որը կատարել է Հրայ Ստեփանյանը: Աշ. Հովհաննիսյանի բազմահմուտ լեզվական զինանոցը հայացնելու գործին են լծվել Նազենի Ղարիբյանը (ֆրանսերեն, իտալերեն), Օլգա Վարդապարյանը (լատիներեն), Լեոնարդո Ֆիլաստոն (իտալերեն), Վարդան Ազատյանը (ռուսերեն): Լատիներենից թարգմանությունները խմբագրել է, առանձին դեպքերում էլ անձամբ թարգմանել՝ Գոհար Մուրադյանը: Չունենալով համապատասխան պատրաստվածություն ու ավանդ՝ չենք կարող մեզ թույլ տալ դույզն-ինչ քննության առարկա դարձնել կամ գնահատել արված թարգմանական աշխատանքը՝ իր մանրամասների մեջ, բայց պարտավոր ենք փաստել, որ կատարվածը թարգմանական ահռելի ձեռնարկում է, ցմրուր մշակված արարք: Գործնական իմաստով այն շրջանառության մեջ է դնում փաստական մեծարժեք նյութ. Իսրայել Օրիի նամակագրության վերը նշված նմուշներից գատ հայերեն են թարգմանվել ավարտաճառում օգտագործված օտարալեզու աղբյուրներից բոլոր մեջբերումները, որոնք ճշտված են թե՛ ըստ բնագրի և թե՛ ըստ Աշ. Հովհաննիսյանի թարգմանությունների, եթե այդպիսիք համապատասխանաբար եղել են: Այս նյութերի աղբյուրագիտական մեծ նպաստն արժենշելուց առաջ, սակայն, ուշարժան է սրանց լեզվական բազմազանության ու խրթնաբան որակի հարուցած թարգմանական բարդության հանգամանքը, ինչը լուծվել է այնքան հաջողությամբ, որ դրանք առանց իմաստային կորուստների դարձել են լիահունչ ու անփոթ հայերեն տեքստեր: Սրա կողքին հետաքրքիր մի խորհմացությամբ հղացվել և համարյա թե ճշտությամբ իրականացվել է ավարտաճառի հայերեն թարգմանությունը Աշ. Հովհաննիսյանի իսկ լեզվով մատուցանելու միտքը: Երբ մեր գիտական միտքը՝ իր հիմնական արտահայտությամբ, բռնեց միադիմի ու կաղապարային լեզվանյութի սահմաններում պարփակվելու ճամփան և այսօր էլ դեգերում է այդ բավիղներում՝ չնկատելով հաճախ չոր ձևի ուժով պահվող իր բովանդակագուրկ դրսևորումները, Աշ. Հովհաննիսյանի ինքնատիպ ու ապրված լեզուն նորից վերակենդանացնելը մարտահրավերի ուժ է ստանում: Այս է, ահա, գրքի հիմնականախաբը, որի շուրջ առարկայացել է աշխատասիրության հետագա կազմությունը:

Արդ, այստեղ որոշ դադար տանք ու ընդհատված տեղից շարունակենք ներկայացնել կառուցվածքը: Գիրքը սկսում է ընդարձակ ներածական մասով, ուր ներկա-

յացված են բովանդակությունը, «Մատենաշարի նախաբան», «Երախտիքի խոսք», «Ինստիտուտի կողմից», «Մուտք» (պատմաբան Նորայր Մարտիսանյանի խոսքն է հրատարակության առիթով) վերտառությամբ կարճ բաժինները և ծանոթագրություններից օգտվելու ուղենշային մի գրառում: Կիրարկված ծանոթագրման համակարգը համարում ենք այս գրքի հորինվածքին տրված լուծումներից բարձրագույնը: Աշխատությունը ծանոթագրված է եռամասն սկզբունքով: Առաջին մասը գերմաներեն հրատարակության գիտական ապարատն է, որը տեղակայված է աշխատության տողատակերում: Գրքի վերջում են ծանոթագրությունների հաջորդ երկու խումբը, որոնցից մեկը ներառում է Աշ. Հովհաննիսյանի աշխատանքային նոթերը, մյուսը գրքի խմբագրի առաջ քաշած ընթերցագրություններն են՝ տրված համապատասխանաբար բուն ավարտաճառին, հավելվածին և վավերագրերին: Այսպես, ամենայն ինամքով վերականգնված է ավարտաճառի մյունխենյան հրատարակության Աշ. Հովհաննիսյանի աշխատանքային օրինակի էջերում տասնամյակներ տևած աշխատանքային պրպտումների հիմնական պատկերը՝ ամենատարբեր ընդմիջարկությունների ու գրառումների բարդ մի ամբողջություն, որը բնութագրում է պատմաբանի աշխատանոցն իր գործողության մեջ և իր վրա ունի ինչպես ժամանակաշրջանի պատմական հեղաբեկումների, այնպես էլ նրա պատմագիտական հայացքների հարաճուն փոփոխությունների դրոշմը: Բնագրային զարգացումների հերթագայությունը և դրանց ավարտուն կայացումն արձանագրելու ներդրված գաղափարն ամբողջանում է ավարտաճառի «Դրվագների» համապատասխան հատվածների համեմատական զուգադրմամբ: Աշխատությունը բոլորում են Վ. Ազատյանի «Ոչ եղիցի չեղեալ, գոր ինչ եղեն» Աշ. Հովհաննիսյանի ավարտաճառը և նրա գործուն պատմագիտությունը» հիմնարար ուսումնասիրությունը, անվանացանկը և անգլերեն ընդարձակ ամփոփումը՝ Անժելա Հարությունյանի թարգմանությամբ:

Աշ. Հովհաննիսյանի կենսագրությունն իր բազմաշերտությամբ կարող էր հագուրդ տալ ամենատարբեր կողմնորոշումներից ու շահադիտություններից սնվող կանխակալ մտադրությունների իրագործմանը: Պետական գործչի ու գիտնականի նրա միակուռ ու հակասալից կյանքը լրջագույն ձևախեղումների ու հալածության է ենթարկվել ոչ միայն իր մարմնավոր գոյության օրոք, այլև զարմանալիորեն՝ նաև դրանից հետո: Աշ. Հովհաննիսյանի երևույթը դժվարին փորձություն է դարձել հայ պատմագիտության համար: Պատմաբաններից շատերն ավելի շատ կշռոցը ձեռքն առած հավատաքննիչի բարոյախոսությամբ են քննության առել նրա գործունեությունը, քան փորձել են դիտարկել այն իր պատմական միջավայրի մեջ: Եթե խորհրդային պատմագիտական միտքը, քաղաքական նկատառումներով պայմանավորված, լրության է մատնել նրա բանտարգելության ու արքայի 17 տարին (1937–1954 թթ.) և առկախ թողել նրա կրած հետապնդումների շարժառիթների հարցը, ապա

դա ընդհանուր առմամբ ենթարկվում է որոշակի տրամաբանության. ավելի տարօրինակ է Աշ. Հովհաննիսյանի անձի և գործի մասին հետազայի մեկնաբանությունների ընդհանուր պատկերը: Նրա կենսագրությունը վերանայելու փորձերը սահմանափակվել են հայտնի տվյալների հաճախ տառացի կրկնողությամբ՝ մի տարբերությամբ, որ թեև կարճ հիշատակությամբ, բայց սկսել են արձանագրվել նրա կրած քաղաքական հալածանքները, չեն անտեսվել նաև «իր ժամանակի գոեհիկ մտայնություններին», նույնն է թե՛ «գոեհիկ սոցիոլոգիզմին» տուրք տալու գիտնականի «մոլորությունները»: Լավագույն դեպքերում նրա պատմագիտությունը որակվել է իբրև «բոլշևիկյան կրքոտությամբ լայնախոհ պատմաբանի» գործ, իսկ նրան զբաղեցրած գործիչների ծրագրերը՝ «անիրատեսական պատրանքներ»: Խորհրդային հասարակարգի գաղափարախոսը լինելու Աշ. Հովհաննիսյանին ուղղված մեղադրականներով տարված՝ զարմանալիորեն պատմաբանների մի ամբողջ խումբ չի նկատել, որ իրենց ուսումնասիրություններում մարդու նկատմամբ կիրառել են նույն միջոցները, որոնք բխում են իրենց կողմից այդքան մերժելի համայնակարգի ոգուց իսկ:

Ընդհանուր գծերով այս է եղածը, որի խորապատկերում անակնկալ ձևով դրվում է, ահա, Վ. Ազատյանի «Ոչ եղիցի չեղեալ, գոր ինչ եղեւն». Աշ. Հովհաննիսյանի ավարտաճառը և նրա գործուն պատմագիտությունը» ծավալուն ուսումնասիրությունը: Ազատյանը հիմք է ընդունել Աշ. Հովհաննիսյանի հենց փեղեկված էությունը, իր համակողմանիության մեջ դիտարկել գործիչ-գիտնականի տարաստիճությունները՝ մերժելով դրանք բացասելու և կամ իրար հակադրելու ճանապարհը ու հովհաննիսյանական կյանքի իր մեկնաբանությամբ, ասես, մեր աշխարհըմբռնման մեջ փորձել է ճեղք բացել ներհակություններով զարգացող կյանքի սերումի ու դրա կայացումի հնարավորության համար առհասարակ: Փիլիսոփայական գիտելիքի պատկառագորու չափերը, որին տիրապետում է հետազոտողը, նրան հնարավորություն են տվել խորամուխ լինելու Աշ. Հովհաննիսյանի պատմահայեցողության ակունքներում, գտնելու դրանք սնուցանող երակները և տարորոշելու գիտնականի կողմից խնամքով մշակված նրա հյուսկեն, կուռ պատմագիտության շերտերը: Հարցերը, որոնք Ազատյանը բարձրացրել է այս ուսումնասիրության մեջ, լրիվ նորարժարժ են քննարկվող թեմայի պատմության ամբողջ ընթացքում: Նրա տեսական պատրաստվածությունը հատուկտոր ու բեկված չի, ու դրանով հանդերձ, նա տեսության մեջ չի, որ տեղայնացնում է նյութը, այլ նյութի ներքին բովանդակությամբ է պայմանավորում տեսական իր ընդհանրացումները՝ տեսության իր գործիքակազմը բանեցնելով շատ նրբորեն: Սա Ազատյանին հաջողվել է նաև, որովհետև ուսումնասիրողը խորապես յուրացրել է իր փաստական նյութը: Ասվածի անմիջական վկայությունն է արխիվային բազմաթիվ նյութերի, մասնավորապես Մատենադարանում պահվող Աշ. Հովհաննիսյանի ֆոնդի վավերագրերի վերհանումով ու

ամենատարբեր ուսումնասիրությունների, նամակների, հուշագրությունների, պարբերական մամուլի հրատարակումների համադրմամբ շրջանառության մեջ դրված հսկայական նյութը: Թեև այս ուսումնասիրության առանցքը ավարտաճառն է, դրա քննությունը՝ իր նախագրականերով և հետագա զարգացումներով, ուսումնասիրողն առանձնակի ուշադրություն է դարձրել նաև Աշ. Հովհաննիսյանի կյանքի վաղ շրջանին՝ վերլուծել պատանեկության ու երիտասարդության տարիներին ունեցած գաղափարական ներգործությունները՝ քննելով դրանք իրենց օբյեկտիվ ժամանակի մեջ: Ուսումնասիրության այս հատվածը միայն ավարտաճառի գիտական հենքը պարզորոշելուն չի, որ միտված է. հանգամանորեն ներկայացված է Աշ. Հովհաննիսյանի քաղաքական հայացքների ձևավորման թրժոցը, ինչը կարևորագույն ճշտումներ է մտցնում և էականորեն խմբագրում այս գործչի կյանքի շուրջ մինչ օրս ձևավորված մտայնությունները: Չենք կարող անտեսել նաև ուսումնասիրության լեզուն. Ազատյանը լավ է գրում՝ այս բառի ոչ սովորական նշանակությամբ: Նրա նախադասությունները երբեմն ներքին բարդ կառուցվածքի շուրջ են ձևավորված, բայց դրանք երբեք ճապաղ բառերով չիմացածը կոծկելու ջանքեր չեն: Լեզուն ու միտքը այստեղ հարահյուսված են իրար: Ուսումնասիրողի այս հետազոտությունը, ինչ խոսք, զգալի մեծացնում է այս գրքի կշիռը, բայց հարկ է շեշտել, որ Վ. Ազատյանին է նաև այս հրատարակության հղացքը առհասարակ:

Այս հատորը գերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ մեր դիտարկումներն արվում են միայն աշխատանքն ըստ կարելվույն լրացնելու մտադրությամբ:

«Ներքին գրոց» մատենաշարը ներկայացնում է XIX դարում և XX դարի սկզբին եվրոպական գիտական, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքում ներգրավված հայ ուսանողների ավարտաճառերը, որոնք առնչվում են հումանիտար ու հասարակական գիտությունների ոլորտին: Նպատակն է երևան հանել հայ մտավորական կյանքի այն երեսակողները, որը կայացել է այլ մշակութային եղելությունների հետ հարաբերությամբ: Կուզենայինք, սակայն, մի փոքրիկ դիտարկում անել «Մատենաշարի մասին» բացատրական ակնարկում այս շարքի «Ներքին գրոց» անվանումը դրա միջնադարյան իմաստային ծագումին նույնացնելու և այդ հոլովույթից բխեցնելու մտադրության վերաբերյալ: Անշուշտ, ճիշտ է «Ներքին գրեանք»-ը «Արտաքին գրեանք» եզրույթին հակադրելը, բայց ընդունելի չի դրանց տրված մեկնաբանությունը: Միջնադարյան ընկալմամբ՝ «Արտաքին գրեանք»-ը միայն թարգմանությունները չէին, ինչպես նշված է հատորի մեջ, հետևաբար, «Ներքին գրեանք» եզրույթով էլ սոսկ հայկական մտքի արգասիքները չէին, որ նշանակվում էին: Միջնադարում այս երկուսը հստակ տարանջատված, գրականության տեսակավորման խոշոր՝ իրենց ժամանակի ընկալմամբ գիտակարգեր էին, որոնցից «Ներքին (ներսի, ընտանի)»-ը ընդգրկում էր եկեղեցական, կրոնական մա-

տենագրությունը, իսկ դրանից դուրս եղող ամեն տեսակի գրականություն դասվում էր «Արտաքին գրեանք»-ի մեջ: Այսպիսով, կոպիտ ասած՝ «Ներքինի» ու «Արտաքինի» հակադրությունը պետք է հասկանալ ոչ թե հայկականի և ոչ հայկականի, այլ կրոնականի և ոչ կրոնականի մեջ: Անշուշտ, ասվածը միայն ընդհանուր բնորոշում է, և այս եզրույթների իմաստային նշանակության մեջ այստեղ խորամուխ լինելը մեր նպատակը չէ:

Գիրքը կարոտ է միաձևության. հասկանալի է, որ աշխատության կառուցվածքը որոշակիորեն կարող էր խոչընդոտել սրա իրագործմանը, բայց վստահաբար անհնար չէր դարձնի: Կուզենայինք ասվածի դրսևորմանն անդրադառնալ հատկապես ծանոթագրությունների համակարգում: Այսպես, օրինակ՝ Աշ. Հովհաննիսյանի աշխատանքային նոթերը (ներկայացված են ծանոթագրությունների երկրորդ շերտում՝ նշանակված լատիներեն *a* տառով), որոնք խառնակ լինելուց զատ նաև շատ հաճախ հեղինակի կողմից տրվել են կրճատումների և հապավումների ձևով, հրատարակված գրքում կրճատումները երբեմն բացվել են, երբեմն՝ ոչ: Մեզ համար նախընտրելի կլինեք բոլոր հապավումները կիրառված ձևավոր փակագծերով բացելը, եթե ոչ՝ ապա բոլորը թողնել փակ: Այլապես հասկանալի չի, թե ինչ սկզբունքով է, օրինակ, Մ. Թադիսյանցի անվան Հովհաննիսյանի կրճատ գրելաձևը բացվել (էջ 509, ծնթ. a99), մինչդեռ անգլիացի արևելագետ Ֆ. Կ. Կոնիբերի գիրքը [տե՛ս *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by Frederick Cornwallis Conybear (London: British Museum, 1913)*] մնացել է կրճատ ձևով (էջ 504, ծնթ. a35): Օրինակները շատ են, սակայն այսքանով բավարարվենք: Այնուհանդերձ, թեև բանասիրական որոշակի պատրաստվածությամբ ընթերցողը հիմնականում դժվարություն չի կրի այս հապավումներին հանդիպելիս, կուզենայինք առանձնացնել երկու դեպք, երբ համենայն դեպս, մենք անմիջապես գլխի չենք ընկել, թե ինչ է զեղչվածը: Այսպես, Ջ. Մ. Ի. Ս. կրճատ ձևով (էջ 503, ծնթ. a17) Աշ. Հովհաննիսյանը հղել է Ռուսաստանի Ժողովրդական լուսավորության նախարարության պարբերաթերթը (Журнал Министерства народного просвещения): Ավելի բարդ էր աշխատության էջերում քանիցս հանդիպող Մ. Տ. ձևի (էջ 504, ծնթ. a27, a32, 505, ծնթ. a38, a43, a44, 531, ծնթ. a426) վերձանումը. հիմք ընդունելով Աշ. Հովհաննիսյանի կողմից գեթ մեկ անգամ գործածված Մ. Տետրակ ձևը (տե՛ս էջ 518, ծնթ. a244) և համեմատելով ու ելնելով նրա հղած բոլոր էջերի բովանդակությունից՝ կարծում ենք, որ խոսքը «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» գրքի մասին է, որը նկատի ունենալով՝ Աշ. Հովհաննիսյանը կրճատել է այն իբրև «Մադրասի Տետրակ»*:

* Ա. Ղազիկյանն իր «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի» առաջին հատորում (Վենետիկ, 1909–1912) հիշատակում է «Մատենադարան բարոյական և կրթական տետրակաց» և «Մատենադարան կրթական և գրօսալի տետրակաց» անուններով մատենաշարերը (էջ 1851–1852): Ղազիկյանի մոտ դրանց հրատարակության վայրը և թիվը

Աշխատության էջերում հանդիպում են հատուկ անունների գրության որոշ սխալ ձևեր. այսպես, ճիշտ չեն տրված Ֆելիքս Նևի (էջ 55, 69, 718), Բարսեղ Սարգիսյանի (էջ 51, 61, 720) անունները: Հավանաբար, ձեռագիր Մ և Ս տառերի շփոթի բերումով վրիպած է Սմբատ Տեր-Ավետիսյանի անվան սկզբնատառի վերծանությունը (էջ 507, ծնթ. a74): Անվանացանկում Բյուզանդիոնը զետեղված է որպես համանուն Բյուզանդիային (էջ 723), այնինչ պարզ է, որ խոսքը Կ. Պոլսի մասին է միայն: Անձնանունների սխալ տառադարձության դեպքերին՝ լինի դասական թե արեղյանական ուղղագրությամբ, ինչպես նաև գրքում տեղ գտած մյուս վրիպակներին նախընտրում ենք չանդրադառնալ:

Կատարված դիտարկումները չեն հավակնում և չեն էլ կարող ստվերել այս աշխատության մեջ ներդրված ահռելի ջանքերն ու ստացված արդյունքը: Սա իրադարձային հրատարակություն է և կարող է օրինակելի լինել մի քանի առումով, բայց ամենից կարևորը գիտական հրատարակության արժեքն ու դրա լրջությունը մոռացության չտալու մեզ այնքան անհրաժեշտ ուղերձն է, որ ունի այս գիրքը:

ԳԱՅԱՆԵ ԱՅՎԱԶՅԱՆ

բացակայում են: Հայ գրքի մեզ հայտնի մատենագիտական ցանկերը պրպտելուց հետո կարողացանք տեղեկություններ գտնել երկրորդ մատենաշարի մասին, որը, դատելով բովանդակությունից, ճիշտ է, հեռավոր չափով, բայց կարող էր ավելի աղերսվել Աշ. Հովհաննիսյանի հետաքրքրություններին, քան առաջինը: Գ. Ջարբհանայանից իմանում ենք, որ մատենաշարը տպվել է Վիեննայում՝ Պաշտպան Ս. Աստվածածնի տպարանում, 1849–1860 թթ. տե՛ս [Գ. Ջարբհանայան]. Հայկական մատենագիտություն (Վենետիկ, 1883), էջ 408: Հ. Դավթյանի «Հայ գիրքը 1801–1850 թթ.» (Երևան, 1967) և «Հայ գիրքը 1851–1900 թթ.» (Երևան, 1999) հատորներում մեկ առ մեկ նայել ենք այդ մատենաշարով լույս տեսած գրքերը. դրանք նիհար տեսրակներ են՝ հիմնականում չեն գերազանցում 100 էջը ու չարդարացրին մեր ենթադրությունը, որ կարող էին գործածված լինել Աշ. Հովհաննիսյանի կողմից: Վերը նշված աշխատություններում, ինչպես նաև Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» եռհատորյակում (համապատասխանաբար՝ Երևան, 1959, Երևան, 1976, Երևան, 2004) և Հայ գրքի մնացած երեք հատորներում (հ. Ա, Երևան, 1988, հ. Դ, Երևան, 2007, հ. Ե, Երևան, 2012) նայել ենք Մ տառով զետեղված բոլոր հրատարակությունները, ինչպես նաև Տեսրակները. ոչ մի համոզիչ փաստարկ չենք կարող բերել եղած հրատարակությունների ու ազատագրական տեսիլների կապի օգտին՝ կամ բովանդակային առումով, կամ ունեցած էջերի քանակով դրանք չեն ելնում Աշ. Հովհաննիսյանի հղումների տրամաբանությունից: Մեզ համար անորոշ մնաց միայն, և այդպես էլ չկարողացանք ճշտել «Տեսրակ որ կոչի ընկեր Հայոց»-ի բովանդակությունը, որ զետեղված է Մարգարեան Սամուել անվանաձևի տակ. տե՛ս Ա. Ղազարի կե ա ն. նշվ. աշխ., էջ 1873: Այս պրպտումներից հետո է, որ առաջ ենք քաշում Մ. Տ.-ն որպես «Մադրասի Տեսրակ» (իմա՝ «Նոր տեսրակ որ կոչի Յորդորակ») ընթերցելու վարկածը: